

(2) ԹԱԿՐԵԱՆՆ ԵՒ ԿԼԵՐԻՆԱԿՆՈՒՅԻՆ ԳՈՐԱ ԺԱՆՈՅ

բերի Հայ Ժողովուրդի գաւառաց մէջ տեղւոյն
հետեւեալ իւրերէն, բայց վստահ թող ըլլայ որ
այն հետեւեալ իւրերէն Աստուծոյ շնորհիւ ի մօտոյ
վախճան պիտի գտնեն, և երջանիկ ու անգործ
վիճակ մը պիտի ստանայ. կըլինէրեմ, իմացու-
ցէք իմ Հայ Ժողովուրդեան թէ իւր հանգստու-
թիւնն ու բարօրութիւնն, որուն իրաւամբ ար-
ժանի եղած է՝ մանաւանդ ներկայ դժուարին
պարագայից մէջ մատուցած մեծամեծ ծառա-
յութեամբ, իմ ջերմ բաղձնացու և հոգա-
ծութեան առարկայ եղած է: Վկայ են երկինք
թէ ես միջինին մը վրայ կոխել չեմ ուզեր, և
երբէք չէի կամեր որ այսչափ անմեղ արեւն հո-
ւեր, և այսչափ աւերմունք և աղէտք յառաջ
գային, բայց դժբաղդաբար իմ բաղձնացու
հակառակ տեղի ունեցան, որով հրատարակած
թաթթերուն մէջ առաջադրած բարեկարգու-
թիւններն գործադրելու դեռ ժամանակ չու-
նեցայ. սակայն յայտ մեծ ունիմ որ ներկայ պա-
տերազմը վերջ գտնելուն պէս՝ անոնց ամենալ
կատարեալ պէս պիտի գործադրին:

Ուստի կը խնդրեմ, բարեւ ըրէք իմ սիրելի
Հայ Ժողովուրդեան, և վստահ ըրէք զինքն որ
իւր հաւատարմի և անձնուէր ծառայութեանց
և խոհական ընթացից պտուղը պիտի վայելէ՝:

Ս. Պատրիարք հայրը վեհա. Սուլթանին աշ-
խարհաշէն բաղձնաց և դիտաւորութեանց
իւրին կատարման համար սրտագին բարեմաղ-
թութիւններ ընելով՝ յայտարարեց թէ Հայոց
ազգէն անբաժանելի կերպիւ կապուած է Օսման-
եան հզօր և փառաւոր գահայից հետ և նորա
քաղցր հովանոյն ներքն կը բաղձայ վայելել իւր
կրօնական և ազգային իրաւունքներն ու ազա-
տութիւնները, և թէ Ն. Կ. Վեհափառութենէն
չստ ուրիշ պաշտպան և ապաւէն չունի և չի-
նոտուր: Վեհա. Սուլթանը կրկին կրկին գոհ-
ւած լին յայտնելով, առաջին Օսմանիէ պատ-
անշանը շնորհեց Ս. Պատրիարքին, ըսելով թէ
յանուն Հայոց ազգին կընդհանրեմ ձեզ զայս,
և հրաման ըրաւ արարողապետ ֆեաւիլը—Պէյլին
ը Ս. Պատրիարքին կուրծքը կախէ:

Ս. Պատրիարք հայրն յանուն Հայոց ազգին
շնորհակալութիւն յայտնելով ըսաւ թէ «Հայոց
ազգը բարեբաղդ կը բաւանի զինքն ձեզ նման
նշխարհիկ բարեմասնութեամբ օժտեալ և

հրեշտակային սիրտ կրող մեծ ինքնակալ մը
հաւատակ գտնուելուն համար: Այս, վեհա. Տէր,
դուք Օսմանեան գահուն ամենէն մեծ ինքնա-
կալներէն մին էք, որովհետեւ ձեր գահակալու-
թեան առաջին օրէն ծանր արգելքներու և
դժուարութեանց հանդիպելով, և վայրկեան
միակ հանգիստ չգտնելով, Օսմանեան գահուն
փառքն անարատ պահելու և առաւել ևս բարձ-
րացնելու ջանացիք, յաջողեցաք և պիտի յա-
ջողիք Բարձրելոյն օգնութեամբ, քանի որ այդ-
պիտի եղական սիրտ մ'ունիք և այդպիսի վեհ
բաղձանքներ կը տածէք»:

Ն. Կ. Վեհափառութիւնն ըսաւ թէ շատեց
ի վեր կրփափաքէր զինքն տեսնելու, բայց
յարմար առթի մը կ'սպասէր. ուստի շատ դոհ
եղաւ զինքն տեսնելուն համար, և բաղձանք
յայտնեց որ ուղած ժամանակ տեսակցութեան
գայ իրեն:

Ս. Պատրիարք հայրը վերստին շնորհակալու-
թիւն յայտնելով մեկնեցաւ Ն. Կ. Վեհափառու-
թեան քովէն, և վերստին մասնաւոր սենեակ
մը հրաւիրուելով, ականակու ծխափայտ
սուրճ և օշորակ մատուցուեցան իրենց, և քա-
ռորդի մը չափ առաջին սենեակապետին և քա-
տուղար Սայիտ փաշային հետ տեսակցելէ ետեւ
մեկնեցաւ Պալատէն և ուղղակի Պատրիարքա-
րան գնաց: Մայր եկեղեցւոյ մօտ հասած ժա-
մանակ, եկեղեցական դասն հանդերձ գարօք
դիմաւորեց Նորին Սրբազնութիւնն, որ եկեղե-
ցին մանելով յատուկ ազօթք և բարեմաղթու-
թիւններ մատուցաւ առ Աստուած վասն կենաց և
բարօրութեան Վեհա. Սուլթանին, և միանգա-
մայն Ն. Կ. Վեհափառութեան բարեւ, ու վստ
յայտարարութիւնները ժողովուրդեան հաղորդեց
յուրախօսութիւն ընդհանուր Հայ ազգին:

—Կըլեմք թէ Ն. Պօլսոյ Ա. Նուպար և Շահ-
նազարեան դադարեալ վարժարանին նախկին
սնորհէն պարոն Համբարձում իփէքեան, որ
յերկուց ամաց հետէ ի Զուլիջէրիա կը գտնուէր,
վերադարձեալ է ի Ն. Պօլսոյ, իփէքեան պատ-
ուելին դնացեալ էր ի յիշեալ երկիրն յատուկ
հոգաբարձութեան տուն մի հաստատուելու վասն
ամեն կերպ խնամատարութեան ազգային պա-
տանեաց՝ որք յամենայն կողմանց կը յուղար-
կուին անդ՝ օրինաւոր ուսումն և դաստիարա-
կութիւն ընդունելոյ համար: Դժբաղդաբար

կանայ ոմանց և ի տան իսկ Պ. Մամուրեանի
ցարդ ևս ի կիր արկանին բայքս յառտնին խօ-
սակցութիւնս իւրեանց, թող զհասարակ ժողո-
վուրդն: Ո՛ր դիցուք և զանթիւ զանհամար
բառս, զանուանս պտղոց, բանջարեղինաց, ևս
և զմանցական գաղափարաց և վերացեալ գոյա-
ցութեանց, որք ի կիր առնուն ի մեզ տաճկա-
կան անուանակոչութեամբ. զորօրինակ ասել
Պօլսեցուց ի—դէմ, պալէի և զմիւսնացւոյն ասել
սադախա, մանաւ և այլն: Այսպէս իմա և զորդ հա-
նուր կիրաւութիւնն քի բառիս փոխանակ լի և թի-
թարմատար շարկապաց. և բազմիցս իսկ առ ի
զարդ. որպէս քիսար քի, ինչ քիսար քի, օր քիսար քի,
կէօրեքին քի, քի պիւրիսի, քի քիսի, քի քիսի:

Է. Գաւառական իցէ և մասնիկ մը կցեալ
յարմատս տաճկերէն բայից և յաւելեալ ի վե-
րայ բայքս ընել կամ ըլլալ, կողմել նորագոյն
իմն ոճ տապուածոյ. զորօրինակ քաղաքիւ ընել,
թօղմաթիւ ընել, կէլէթիւ ըլլալ, կէօրեքիւ ըլլալ:
Ը. Գաւառական իցէ և ոճս այս ընտանեկան,
որ յաճախ ի գործածի, մանաւանդ առկանայս,
«Հօգիտ ինքիւն» ըսէ. —Աստուած ինքիւն երամն.
ոչ ահա բառական թարգմանութիւն է տաճկե-
րէնի. «Ճաննը սեփրեք» սեփրէ. —Ալլալէն սեփ-
րէ պաշար. քանզի ըստ պահանջման հայկաբա-
նութեանս պարտիք ասել. «Թէ սիրես զոչի-
քո, կամ առ սէր հոգւոյդ» խօսեաց. —Ի սէր
Աստուծոյ՝ հրամայեալ: Նոյն իսկ բայս հրամայեալ,
հրամայել, չիք ուրեք ի դիրս մեր ի կիր առեալ
ընդարձակ նշանակութեամբ, իբր ընդունել,
առնուլ, ճաշակել, մտանել ի ներքս, այլ հե-
տեւորութիւն է տաճկական բային պաշարմաւ:
Նոյնպէս և ասելն ալ քիսի, քիսի, քիսի, քիսի,
իբրեւ և այլն:

Արդ, որպէս տեսանի ի վերլուծութեանս,

յիշեալ պատուելին ազգօգուտ նպատակն յա-
ջողութեամբ չպատկուեցաւ:

—ԱՐՇԱՆՈՅՍ Նախընթաց թուով հրատա-
րակեցինք զանուանս անդամոց նորընտիր ազ-
գային Բաղաքական Ժողովոյ մերոյ: Երկուքն ի
նոցանէ՝ պայնքն մեծարգոյ տեսարք թ. Զաքի-
եան և Պետրոս Պարտիզպանեան՝ իրենց հրաժա-
րականը առած լինելով, նոյա յաջորդեցին մե-
ծայարդ պարոնայք Մարտիրոս Գառնիկեան և
Պօլսոյ Յօ. Տիպէրեան:

—Ազգային Տնտեսական Խորհրդոյն ջանքն
առ ի բարեկարգել ղեկամուսն և զմասն ազ-
գային մտուկին քաղաքիս՝ դուլութեամբ և
շնորհակալութեամբ կը յիշտակուին գրեթէ յա-
մենայն ազգայնոց. քանզի լսածուս նայելով՝
յիշեալ մտուկին ելեմտական կացութիւնն ա-
մենին բարեւք վիճակի՝ մէջ չգտնուիր և կա-
տարեալ վերանորոգման կարօտ է: Սիրելի է
մեզ յուսալ թէ այս վերանորոգումն ի գործ
պիտի դրուի ազգասիրական անխնջ ջանիւք
մեր Տնտեսական Խորհրդոյն, որոյ մեծարգոյ
անդամքն են:

Պարոնայք Ստեփան Յօ. Տէտեան՝ ատենապետ,
Մերկեր Մերկերեան՝ ատենադպիր, Թադւոր
Պարծանքեան, Յովհաննէս Ս. Զաքեան և Գե-
որգ Ակախեան:

Պատրիարքարանի և Վենետիկի Միաբանու-
թեան մէջ բանակցութիւն կըլլայ այս օրերս՝
Փարիզի Մուրատեան վարժարանի վաճառման
խնդրոյն առթիւ: Միաբանութիւնը լսելով, որ
Պատրիարքարանը Բարձրագոյն Դռնէն կը պա-
հանջէ արգելուլ վարժարանին վաճառումն, և
Խառն յանձնաժողովոյ մը կազմութիւնը կը
խնդրէ՝ Մուրատեան կտակէն մեր ազգին ու-
նեցած իրաւունքն որոշելու համար, փութացեր
է Պօլսոյ ներկայացուցչին միջոցաւ դուրսը բա-
ցատրութիւն տալ, թէ Փարիզի վարժարանը կը
վաճառուի, ոչ թէ Մուրատեան կտակին գոր-
ծադրութիւնը բոլորովին խափանելու դիտմամբ
այլ Մուրատեան ու Ռաֆայէլեան վարժարան-
ները միացնելու, և առաւել ևս հոգ տանելու
նպատակաւ, թէ Փարիզի վարժարանին տեղը
շահաւոր գնով ուղող կայ, և այն դրամը յուժ-
պէտս չպիտի վատնուի, այլ արդիւնաւոր կալ-
ուածներ պիտի գնուին վարժարանին համար:

Իւրաքանչիւր մասունք բանից աշխարհիկ բար-
բառոյս է ճիշտ նմանողութիւն տաճկերէնի.
ապա ուրեմն և բաղադրեալն ի նոցունց լեզու՝
է կազմեալ և ձեւակերպեալ ի վերայ կանոնաց
նոյն լեզուի: Ոչ ոք ընդդիմացի այսմ, բայց
եթէ որ կամաւոր կոյր իցէ և վիսայցէ պղպայցէ
չճանաչել զգոյութիւն արեգական: Եւ եթէ
տակաւին յամառիցէ ընդդիմաբանն, ցուցցէ
ինձ ոյր գաւառի բարբառք իցեն, և հաւա-
նեցուցէ զիս ինքնագիւտ փաստիւք և ոչ յօտա-
րաց ի փոխ առեալ, որք չգործեն երբէք: Իսկ
նա ջանալով փախուստ տալ յանհրաժեշտ փա-
տիցս, զանազանէ զաշխարհաբառն ի լեզու ժո-
ղովրդային և ի լեզու ուսումնական, առանց
զմտաւ ածելոյ թէ խնդիր մեր է զաւանական
և զգաւաւական լեզուէ և ոչ զմասնաւոր ա-
րանց, որոց ոճ դեռ այն ինչ կարգաւորեալ
յստակի շնորհիւ գորաբառին: Վասնորոյ զաշ-
խարհաբառ թարգմանութիւն իմ զոր իբր յօրի-
նակ ի մէջ բերեալ էի յառաջնում յօդուածի,
«Ըստ քմաց բառական թարգմանութիւն համա-
րի թուրքերէնի», և ոչ ընդունի զայն իբր հայ-
երէն արգի ոճ, և առաջի առնէ ինձ ընթեռ-
նուլ զՄատիս և զմատեանս ինչ այլ(3), զորս և
եթ համարի հարադատ լեզու, լռեւեայն իմա-
նալով և զՄամուլն իւր. յորմէ կամիմ ցայս նը-
ռադքաղել յօրինակ հատած մի բանից աշ-
խարհաբառի իւրոյ, և յեղուլ զայն ի թրքաց և
ի գրոց լեզուս, առ ի արդարացուցանել զիս ի
բանից իւրոց. «Քուսիա», ասէ, աշխարհակալու-

(3) Զարմանալի է, զի ի շարի աստ մատենից գովե-
ն գերկասիրեալսն Չեքազայ, իբրեւս առ ի շնորհակա-
ն ձրի գովասանութեանց գոր փոխադարձաբար ընդունի
ի նման. ապա քի ոչ՝ ընկեր ոչ հետեւի ընդարձական
ոճս նորին ի գրութեան եւ ի բարգմանութեան իւր:

